

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ «ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՎԵՏԱՐԱՆՉՈՒԹՅՈՒՆ» ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

1989 թ. մայիսի 22-ից մինչև հունիսի 1-ը ԱՄՆ-ի Տեխաս նահանգի Սան Անտոնիո քաղաքում տեղի ունեցավ ԵՀԽ-ի «Առաքելություն և ավետարանչություն» հանձնաժողովի հերթական համագումարը, որի բնաբանն էր «Թող քո կամքը լինի. առաքելություն Քրիստոսի ճանապարհով»: Նախորդ համաժողովը տեղի էր ունեցել շուրջ ինը տարի առաջ՝ 1980 թվականին: Սույն համաժողովին մասնակցում էին ԵՀԽ-ի անդամ Եկեղեցիների ներկայացուցիչներ, դիտորդներ, մամուլի, ռադիոյի և հեռուստատեսության աշխատակիցներ՝ ընդամենը 1400 հոգի, աշխարհի տարբեր ցամաքամասերի 110 երկրներից:

Համաժողովին Հայ Եկեղեցու անունից իր մասնակցությունն էր բերում նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պատվիրակությունը՝ բաղկացած հետևյալ անձերից. Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյան, Ժնևի հայոց Ս. Հակոբ եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Վիգեն վարդապետ Այքազյան, Հյուսիսային Ամերիկայի հայոց արևելյան թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Խաժակ վարդապետ Պարսամյան, Էլբրրոնի հայոց Ս. Ստեփանոս եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Հայկազուն ծայր. վարդապետ Նաջարյան և օրիորդ Նենսի Բասմաջյան:

Համաժողովը տեղի ունեցավ Սան Անտոնիո քաղաքի՝ Սուրբ Երրորդություն համալսարանում: Ամեն առավոտ, ժամը 8.15-ին, նախքան ժողովի աշխատանքների սկսվելը, համալսարանի մատուռում տեղի էր ունենում հատուկ պաշտամունք:

Համաժողովի աշխատանքները հենց սկզբից առաջ տարվեցին չորս առանձին բաժիններում, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր բնաբանը: Առաջին բաժնի բնաբանն էր՝ «Դարձ դեպի կենդանի Աստված», երկրորդինը՝ «Մասնակից դառնալ տառապանքի և պայքարի մեջ եղողների կյանքին», երրորդինը՝ «Երկիրը պատկանում է Տիրոջը» և չորրորդինը՝ «Դեպի առաքելությամբ վերանորոգված համայնքներ»:

Յուրաքանչյուր բաժնի նպատակն էր ուսումնասիրել տվյալ բաժնին վերաբերող հարցերը՝ որպես հիմք ունենալով համաժողովի բնաբանը՝ «Առա-

քելություն Քրիստոսի ճանապարհով»: Բաժինները իրենց հերթին բաժանվեցին աշխատանքային փոքր խմբերի՝ մշակելու համար հավատարմության գործողությունները, ըստ հետևյալ ուղղությունների.

ա. Հնարավոր դարձնել և իրագործել դրանք այս աշխարհում և այս կյանքում:

բ. Շեշտակշռել դրանք այնպես, որ հետագա առաջխաղացումը դառնա հասանելի.

գ. Հստակեցնել, թե ո՞ւմ է ուղղված այդ կոչը (սկսել մեր անձից, բայց չվերջացնել մեզանով):

Լիագումար նիստերում առանձին զեկուցումներով հանդես եկան «Առաքելություն և ավետարանչություն» հանձնաժողովի տնօրեն դոկտ. Էոժեն Սթոքուելը, համագումարի ատենապետ Անդրուսայի եպիսկոպոս Անասթասիոսը և ԵՀԽ-ի գլխավոր քարտուղար դոկտ. Էմիլիո Կաստրոն: Առաջինը շոշափեց Եկեղեցիների առաքելությանը վերաբերող բազմաթիվ հարցեր ինչպես ներկա ժամանակում, այնպես էլ ապագայում, իսկ վերջին երկու զեկուցողները հիմնականում աստվածաբանական խորհրդածություններ արեցին ներկա համաժողովի նպատակի շուրջ:

Վերջին երկու օրերի ընթացքում համաժողովի մասնակիցները լիագումար մի շարք նիստերում հանգամանորեն քննության առան վերոհիշյալ չորս բաժինների կողմից ներկայացված զեկուցագրերը իրենց աշխատանքի արդյունքների մասին և քվեարկությամբ հաստատեցին դրանք:

Հայ Եկեղեցու նպաստը սույն համաժողովին այն եղավ, որ Մայր Աթոռի պատվիրակությունը տեղեկություններ հաղորդեց առաքելական այն աշխատանքի մասին, որ Հայ Եկեղեցին կատարել է Հայաստանում քրիստոնեության հաստատումից սկսած մինչև մեր օրերը: Աշխատանքային երկրորդ բաժնում Հայ Եկեղեցու պատվիրակության կողմից ժողովականներին հաղորդում տրվեց Ղարաբաղյան դեպքերի մասին, ընդ սմին բացատրվեցին Ղարաբաղում և Երևանում տեղի ունեցած զանգվածային ժողովրդական ցույցերի պատճառները: Մատնանշվեց նաև, որ շնորհիվ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի հետևողական ջանքերի, ներկայումս Ղարաբաղում չորս հայկական վանքեր ու եկեղեցիներ վերադարձվել են Մայր Աթոռին, որոնք, իբրև գործող սրբավայրեր, շուտով պիտի ծառայեն հայ ժողովրդի հոգևոր կարիքներին:

Եկեղեցիների համաշխարհային Խորհրդին առընթեր՝ Քրիստոնյա Երիտասարդների ժողովում Մայր Աթոռի ներկայացուցիչների կողմից աշխարհի համայն քրիստոնյա երիտասարդությանը կոչ արվեց, որպեսզի հիշեն 1988 թ. Դեկտեմբերի 7-ին Հայաստանում տեղի ունեցած երկրաշարժի զոհերին, որոնց 60 տոկոսը երեխաներ և պատանիներ էին: Հայ Եկեղեցու պատվիրակությունը այս առթիվ ներկայացրեց նաև 1915 թ. հայ ցեղասպանության վերաբերյալ մի բանաձև, որ ընդունվեց համաժողովի կողմից: Ըստ այդ բանաձևի, համաժողովը, ի միջի այլոց, առաջարկում է, որ ԵՀԽ-ի անդամ բոլոր Եկեղեցիները դիմեն իրենց կառավարություններին, որպեսզի ճնշում գործադրեն թուրքական ներկա կառավարության վրա՝ ճանաչելու 1915 թ. հայկական ցեղասպանության ակտը: Բացի այդ, պահանջում է, որ անցնող 75 տարիների ընթացքում թուրքերի կողմից քանդված հայկական ավելի քան 2000 պատմական վանքերն ու եկեղեցիները թուրքական կառավարությունը սկսի վերանորոգել և վերակառուցել: Այս առթիվ առաջարկվում է, որ ԵՀԽ-ն նշանակի մի հանձնախումբ և նրան պարտականություն տա այցելելու այն

սուրբ վայրերը, որոնք գտնվում են ներկայումս թուրքական գրավման տակ եղող Արևմտյան Հայաստանում: Առաջարկվում է նաև, որ հայկական ցեղասպանության 75-ամյակի առթիվ 1991 թվականին Կամբերայում գումարվելիք ԵՀԽ-ի համագումարում մասնավոր ճանաչում տրվի այդ կարևոր տարեդարձին:

Համաժողովի ընթացքում Ս. Երրորդություն համալսարանի մատուռում մեջ Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների մասնակցությամբ մատուցվեց սուրբ պատարագ: Պատարագիչն էր Տ. Ներսես արքեպիսկոպոսը:

Մայիսի 25-ին Հայ Եկեղեցու պատվիրակությունը մասնակցեց Օրթոդոքս և Ուղղափառ Եկեղեցիների կողմից կատարված էկումենիկ արարողությանը, որը տեղի ունեցավ տեղի հունական օրթոդոքս եկեղեցում:

Մայիսի 28-ին շրջանի հոգևոր հովիվ Տ. Ներսես ավագ քահանա Ճեպեճյանի հրավերով սուրբ պատարագներ մատուցվեցին Հյուսթընի և Սան Անտոնիոյի հայ համայնքների հոգևոր մխիթարության համար՝ այդ քաղաքների եկեղեցիներում:

ԹՂԹԱԿԻՑ